<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում
հինգշաբթի, 28 նոյեմբերի 2024թ., 14:05

Մասնակցեցին՝
Բաժնետերեր
12 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ
Գագիկ Զաքարյան (նախագահ)
Հրահատ Արզումանյան
Վարդան Աթայան
Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտ
Ռուբեն Ինջիկյան
Կարինե Մինասյան

Էդուարդ Զամանյան

Բանկի Վարչություն
Մեսրոպ Հակոբյան (նախագահ)
Արարատ Ղուկասյան
Գոհար Գրիգորյան
Դավիթ Պետրոսյան
Վաղինակ Ստեփանյան
Սերգեյ Քոչարյան

Հրավիրվածներ
ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացուցիչներ
Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանը:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ <Յունիբանկ> ԲԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 11.11.2024թ. դրությամբ:
Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել է Բանկի պաշտոնական կայքէջում, հրապարակվել է <Ժողովուրդ> օրաթերթում, ծանուցումները քվեարթերթիկների հետ միասին ուղարկվել են / տրամադրվել են բաժնետերերին 12.11.2024թ-ին:
Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 28.11.2024թ-ին՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը

կազմվել է 28.11.2024թ-ին:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 181.254.472 հատ, որից քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 169.937.349 բաժնետոմս, կամ տոկոսային հարաբերությամբ 93.76%-ը: Քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկներից անվավեր ճանաչված առկա չեն: Քվորումն ապահովված է:

Բացելով նիստը և ողջունելով մասնակիցներին՝ **Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը** ներկայացրեց, որ Բանկի զարգացմանը համահունչ նախատեսվում է իրականացնել բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում և փոփոխություններ կատարել ներքին իրավական ակտերում՝ բարելավելով Բանկի կորպորատիվ կառավարման համակարգը:
Օրակարգի հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելու համար խոսքը փոխանցվեց Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանին:

Հարց 1. <Յունիբանկ> ԲԲԸ սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման տեղաբաշխման ձևը սահմանելու մասին:

Մեսրոպ Հակոբյանը ողջունեց մասնակիցներին, այնուհետև նշեց, որ Բանկի զարգացման ռազմավարության շրջանակներում առաջադրված խնդիրների իրագործման նպատակով և հաշվի առնելով <Յունիբանկ> ԲԲԸ-ի արժեթղթերի նկատմամբ պահանջարկը, Բանկի Խորհուրդը որոշում է կայացրել իրականացնել թվով 10.000.000 հատ սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում՝ յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով: Բաժնետոմսերի տեղաբաշխման ձևը սահմանում է բաժնետերերի ընդհանուր ժողովը, և օրակարգի 1-ին հարցով առաջարկվում է այն իրականացնել բաց բաժանորդագրության միջոցով:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները՝ ըստ օրակարգի 1-ին հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 169.937.349 ձայն, կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով, բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց <Յունիբանկ> ԲԲԸ թվով 10.000.000 հատ սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման տեղաբաշխումն իրականացնել բաց բաժանորդագրության միջոցով:

Հարց 2. <Յունիբանկ> ԲԲԸ կանոնադրությունում փոփոխությունները հաստատելու մասին:

Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց, որ վերջին տարիներին Բանկը առավել մեծ ուշադրություն է դարձրել կորպորատիվ կառավարման միջազգային լավագույն փորձի կիրառմանը, KPMG ընկերության կողմից իրականացված խորհրդատվության շրջանակներում նախաձեռնել է մի շարք միջոցառումներ՝ ուղղված կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործմանը: Այս կապակցությամբ առաջարկվում է կատարել փոփոխություններ և լրացումներ Բանկի կանոնադրությունում՝ համաձայն նախապես տրամադրված նախագծի:

Ժողովի քարտուղարը ներկայացրեց, որ քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները՝ ըստ օրակարգի 2-րդ հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 169.937.349 ձայն, կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ

կանոնադրությունում փոփոխությունները և ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ գրանցման:

Հարց 3. <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> ներքին իրավական ակտում փոփոխությունները հաստատելու մասին:

Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց, որ Բանկի Խորհրդի որոշմամբ առաջարկվում է կատարել փոփոխություններ <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> ներքին իրավական ակտում, մասնավորապես ավելացնել դրույթներ, որոնք սահմանում են Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի ծանուցման և նրանց մասնակցության կարգը, որոշ կետերի շարադրանքը համապատասխանեցնել Բանկի կանոնադրությանը և կատարել այլ տեխնիկական բնույթի ուղղումներ՝ համաձայն նախապես տրամադրված նախագծի:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները՝ ըստ օրակարգի 3-րդ հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 169.937.349 ձայն, կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով, բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց հաստատել <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> ներքին իրավական ակտը՝ նոր խմբագրությամբ:

Աննա Բադոյանը հայտարարեց, որ Ժողովի օրակարգի հարցերը քննարկված են, որոշումներն ընդունված են, դիմեց ներկաներին հարցեր տալու առաջարկով: Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Ժողովի նահագահ Գագիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին և ավարտեց Բաժնետերերի ժողովը ժամը 14:25:

Գագիկ Զաքարյան **Նախագահ**	**Աննա Բադոյան** **Քարտուղար**

ք. Երևան, 29 նոյեմբերի 2024թ.